ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<19>> հուլիսի 2022թ. N ՄՈ/448-2022

ք. Արմավիր

<< ԱՐՏԱՇԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼԱՐԻՍԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Լարիսա Պետրոսյանի 2022 թվականի հուլիսի 18-ի դիմումը.

որոշում եմ՝

1. <<Արտաշարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լարիսա Պետրոսյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը 2022 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 9-ը ներառյալ՝ 15 աշխատանքային օր տևողությամբ:
2. Լարիսա Պետրոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում <<Արտաշարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել <<Արտաշարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Կարինե Հարությունյանին:
3. 2022 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 9-ը ներառյալ <<Արտաշարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Կարինե Հարությունյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Լարիսա Պետրոսյանին աշխատանքի մեջ համարել 2022 թվական օգոստոսի 10-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

19.07.2022

X

VERIFIED OCSP 19.07.2022 10:16:09 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ